



## ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼԱՏՅԱՆ

### **«ՀՈՎՆԱՆԻ ՆՇԱՆԸ»**

Հովնան մարգարե հիշված է Ավետարանի մեջ իբրև «ՆՇԱՆ» երկու կարևոր երեւոյթներու. նախ՝ իբրև «նշան» Հիսուսի հարության. (Մատթ. ԺԲ 40): Երկրորդ՝ իբրև «նշան» ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ: Փարիսեցիներ և դպիրներ «երկինքն նշան մը տեսնել» կուզեն Հիսուսն, որ հետևյալ խիստ պատահանք կուտա անոնց. «Այս չար սերունդը նշան կուզե. և երկինքն որիշ նշան պիտի չորսի ասոր բացի Հովնանի նշանեն: Զի ինչպես որ Հովնան նշան մը եղավ նիմկեացիներուն, նոյնպես պիտի ըլլա նաև Մարդու Որդին (Քրիստոս) այս սերունդին...: Նիմկեացիներ պիտի դատապարտեն այս սերունդը, որովհետև ապաշխարեցին Հովնանի քարոզությամբ. և ահա Հովնանեն պեսի մեծը կա այստեղ». (Ղոկ. ԺԱ. 16 և 29—32):

Մենք կգործածենք մեր գրության վերնացիրը այս վերջին իմաստով:

Հովնանի պատմությունը առհասարակ ձանոթ է որպես հետաքրքրական հերիալը մարդու մը, որ կլանի վիշապ ձուկի մը կողմեն, որտես սակայն ողջ դուրս կուգա երեք օրեր հետո: Հակառակ սակայն իր այս համեստ երևույթին այս պատմվածքը իր մեջ կպարունակե Հին Կտակարանի կրոնա-քրոջական և ընկերային բարձրագույն ուսումներեն մեկը, և հետևաբար Հովնանի

գործին հեղինակը արժանի է դրվելու քովիկը Եսայի և Երեմիա մարգարեներու, որոնք իրավամբ Ակատված են Հին Կտակարանի կրոնական ուսուցմանց բարձրագույն կատարեները: Գիտնական անձնավորություն մը, որ ավելի քան հարյուր անգամ կարդացած է զայն, ըստ է. «Եթր կմոտենաս այս գիրքին հանե կոչիկներդ քու ուոքերեղ, որովհետև հողը որուն վրա կկենաս՝ սուրբ է»:

Նախքան մտնելը այս պատմվածքի խորհրդածության մեջ, անհրաժեշտ Կմկատենք արտահայտվիլ ընդդեմ նախապաշտրությի մը և միալ տեսակետի մը, որ զգալի կերպով տարածված է լայն շրջանակներու մեջ: Ումաք կկարծեն թե Հին Կտակարանը լոկ որովն ժողովուրդի մը պատմութիւնը, կրոնը և իմաստաթրական ու բարոյական մտածումները պարունակող մատյան մըն է. հետևաբար, կեզրակացնեն անոնք, ի՞նչու այնքան մեծ կարևորություն տալ անոր, և ի՞նչու կոչել զայն «Սուրբ Գիրք»:

Տարակույնէ վեր է, թե Հին Կտակարանը կպարունակե Խրայելի ժողովուրդին կյանքին և կրոնին պատմությունը. սակայն բացահայտ է միաժամանակ, թե ա. Գիրքին նպատակը լոկ այդ ժողովուրդին պատմությունը ներկայացնել չէ: Այս իրողությունը կհաստատվի հատկապես Աստվածաշունչի

ամենն ապատմական» նկատված գիրքն ուն մեջ: Հստ այս հիեա թագավորներու պատմությունը ներկայացնող ԹԱԳԱՎԱՐՈՒԹՅԱՆ գիրքերուն մեջ, յուրաքանչյոր իշխանակորի անունը հիշատակվել է ու անոր լոկ կրոնական արժեք ներկայացնող գործերը պատմվել են ետք, գրեթե համեմեր զի պես կըրենավի մեն մի թագավորի կանքի վերջավորության հնուկալ ասությունը:

«Եւ մնացորդը բանից (այս անուն թագավորի) անս գրեալ են ի գիրս բանից առարց թագավորացն Խրայէլի» կամ «Յուդայի»:

(Տես Գ Թագ. ԺԴ 19 և 29, ԺԵ 7, 23, 31... Դ Թագ. Ա 18 և այլ բազմաթիվ նման տեղիքներ):

Սա կենանակն, որ արդեն իսկ գոյություն ունեցած են Հուդայի և Խրայէլի զույգ թագավորությանց ուրուցն պատմական գիրքներ, որոնցւն ընտրովի կվեցնեն իր հրոբերը Հին Կտակարանի ԹԱԳԱՎԱՐՈՒԹՅԱՆ գիրքերու հեղինակը, զոտ կրոնական հապտակերու և ոչ՝ պատմագրության համար:

Սատվածաշունչի ընդհանուր նպատակն է տվյալ ազգի մը պատմության զանազան դրվագներու ընդմեջեն՝ համամարդկային տարողություն ունեցող կրոնական ինչ-ինչ ճշմարտություններ հայտնել ամրող մարդկության համար: Այս իրողությունը կրացահայտվի իր պարզագույն ձևին տակ Տասեարանյա պատվիրաններու պարագային: Ստուգ է, որ անոնք ալ տրվեցան Խրայէլի ժողովուրդին համար. պատմաները անոնք ուղղակի կամ անողողակի ընդունված են այսօր գրեթե համայն քաղաքակիրթ մարդկության կողմէ: Տասեարանը պատվիրաններուն այս կամ այս հոդվածին անունավիլը կամ չիրարկիլը հակափառ մը չէ անոնց համամարդկային արժեք ունենալուն, քանի որ գրեթե ամեն բնականն մարդ, որուն տրամաբանելու կարողությունը չէ աղոտած, ն շիտակը սիսակն զատորոշելու բնակդը չէ թացած, պիտի ընդունի, որ Տասեարանյա պատվիրանները անհրաժեշտ օրենքներ են ամրող մարդկային ընկերության համար. հետևաքար անոնց կիրարկումը՝ մեր ամենօրյա կյանքին մեջ՝ ամեն անհատի բարոյական հիմնական պարտավորությունը պիտի ըլլա:

Անկախարար ուրեմն Սատվածաշունչի գիրքերուն պատմական ու գեղարվանական մեծ հշանակորթենեն, անոնց բուն արժեքը կկայանա իրենց ներկայացված կրոնական, բարոյական և իմաստափառական հարցերուն մեջ, և իրենց այդ հանգամանքով մանավանդ կշահագրգուն ամրող մարդկությունը, քանի որ մարդ խորքին մեջ կրոնական, բարոյական և իմաստափառա-

կան բնակդի տեր էսկ մըն է: Սատվածաշունչի մեջ գործող, սպառող, մտածող և խոսող անձերը մարդկային ազգի ներկայացուցիչներ են նախքան ցեղի մը անդամ ըլլալը: Ու պատգամը, որ կհաղորդվի անոնց բերանով կամ կրանքով, կողըլի ևսկ համայն մարդկության: «Քո Սատվածդ պիտի սիրեա ամբողջ բնակդը և ընկերդ պիտի սիրեա անձիդ պես», կրազմե խստացումք Սատվածաշունչի կրոնա-բարույական ուսուցման և իբրև այդ կողըլի որչափ Խրայէլի՝ նոյնքան նաև բոլոր ժողովուրդներուն: Արդար ուղիղ մտածում և օրինակելի կենացի անհատնում շտեմարան մըն է ս. Գիրքը, որ ցարդ չէ գերազացված ու մեկ որիշ մասնուն և պիտի չգերազացվիլի: Մեր երկար գունդը, որչափ մենք գիտենք, Հիմալայան ներեն ավելի բարձր զագաթեր ստեղծելու ի վիճակի չէ այլն. իր բարձրագույնը տվյալ է անոնցով իր ենչելի և վերիկայրութերու դարաշրջանին: Նոյն է ճշմարտությունը Սատվածաշունչի պարագային, կրոնական և բարոյական բնագավանի մեջ:

Ս. Գրքի մեջ գործող երրայէցի ժողովուրդը գրեթե ոչինչով կտարքերի ժողովուրդան մյուս ժողովուրդներուն, բացի թերևս թիվով, որ միշտ փոքր եղած է. և քաղաքական ու տնտեսական ներուով, որ միշտ անենշան եղած է: Այս ժողովուրդը օժտված է մարդկային ազգին հասող նոյն ձիրքերով և նոյն կիրքերով, ու վարակիվ է նոյն առավելություններով և նոյն թերություններով: Տարբերությունը այն է, որ Սատված «ԽՈՂԱԾ» է այս ժողովուրդի լավագույն ներկայացուցիչներուն բերանով, այս խեր ու խստապարանց ժողովուրդներ տիպարային ժողովուրդ մը կերտելու համար՝ հօրինակ այլ ազգերու: Թեև գործնականապես այդ չէ հաջողված, բայց գեթ կազմված է այն ընկերային դրույթունը, ըստոնք այն ընկերային կաղապարը, որուն մեջ կրան թափիլ ունէ ժողովուրդ: Սատված մասնավոր կերպով զրադված է այս ժողովուրդով, ոչ թե անոնց ունեցած ունեավակելույթան համար, այլ՝ բոլոր ազգերեն կիրարկելի ընկերային օրինակ մը կամ դրույթունը մը ստեղծելու համար: Ու աստվածային այս մանկավարժական գործողությունը ի վերջո իր գործնական և ընկերային լուրու մը զտավ Քրիստոսվ. Անոր քարոզած վարդապետությամբ, կատարած տնօրենություններով և հիմնած նոր ընկերությամբը: Հրեա ժողովուրդին մեջ միայն տիպար ընկերությունը ստեղծելու աստվածային այս ՓՈՒԶԸ՝ Քրիստոսվ դուրս եկավ երրայական ժողովուրդի ներ շրջանակներ և տարածվեցավ ամրող մարդկության վրա, առանց ցեղի և լեզվի խստության: Ստեղծեցավ ԵԿԵՂԵՑԻՆ, Աստուծո նոր ժողովուրդը, որ

շարունակողը և իրականացնողը եղավ Հին Ուխտի մեջ ստեղծված ընկերային տիպարին, այս անգամ համամարդկային տարրողությամբ:

Կետք է հաստատել, որ Աստվածաշունչի «ընտրյալ ժողովորդը» երկինքն իրեն տըրված աստվածային պատգամները ոչ միայն ինք լրիվ չգործադրեց, այլ նաև չկրցալ հեթանոսներուն ավանդել: Ընդհակառակը շարունակ հակամետ եղավ մարգարեներու ցուց տված սրբության և արդարության շավիդներեն դուրս գալու և ինալու կուպաշտության մոլորության մեջ: Հրեա ժողովուրդի այս անհավատարմական հակումները տիրականորեն մատնանշված են քրիստոնյա նորածին եկեղեցի առաջին մեծ քառորդին ներանուի կողմէ: «Գործ առաքելոց»-ի մեջ պահված իր պատմական մեծ ճաղին մեջ կըսէ ան.

Մովսես Աստուծմէ «ընդունեց կենդանի պատգամներ մեջ տրվելու համար, սակայն մեր հայրերը չուզեցին հնազանդիլ անոր, ու մերժեցին զայն և իրենց սրտով ետ Եգիպտոսու դարձան... և շինեցին (ոսկե) հորթը և կուռքի զոհ մասուցին»: Ու մեծ քարոզիչը իր հոյակապ խոսքը կավարտե այսպես. «Խստապարանոցներ և սրտով ու ականջով անթլիատներ, դուք շարունակ սորք Հոգիի հակառակ կենաք, ինչպես արդարն ըրին ձեր հայրերը: Մարգարեներեն ո՞ր մեկը շիպածեցին ձեր հայրերը, և սպանեցին զանոնք որոնք կանխագուշակեցին զպուտը Արդարին (Մեսիային, Քրիստոսին) ո-

րուն մատնիշները և սպաննողները եղաք դուր, որ հրեշտակներու միջոցավ օրենքներ առի և չպահեցիք զանոնք» (Գործ. է 38—41 և 51—53):

Գերության ընթացքին և անկե հետո, այսինքն նախ քան Քրիստոս Զ և Ե դարերուն, հրեաներ թեև իսպան բուժվեցան կուպաշտության ախտեն, բայց մյուս կողմէն դարձան մոլենան օրինապաշտներ, լեցված զորավոր հակարությամբ հանդեպ հեթանոսներու: Աստուծո համամարդկային պատգամները ծրաբեցին իրենց նեղմության վարշամականներու մեջ և թաղեցին զանոնք իրենց հորինած հազարումեկ ավանդություններու և մասր օրենքներու մեջ, «Միթրան»-ներու և «Թելմուտ»-ներու մեջ, և չուզեցին ոչ իրենք հաղորդ դառնալ, ոչ այնեթանոսները բաժնելից դարձնել իրենց մեծ մարգարեներու լուսամիտ գաղափարներուն:

Հրեա լայն մտածողներեն շատեր հավանաբար նշմարած պիտի ըլլային այս նոր և նոյնքան վտանգավոր շեղումը. բայց համարձակություն չին օգար մատնանշելու վտանգը, քանի որ հակածողովրդական սիրտի ըլլար նման ցուցմունք մը: Ի վերջո Խրայենի մեծ մարգարեներուն արժանավոր մեկ ծառանգորդ՝ աստվածային ներշնչումը զգաց իր մեջ գրելու Հովհաննի գիրքը, և առակի մը ձկին տակ մատնանշելու այն սխալ մտանությունը, որուն գերին դառնալ սկած էր Խրայելը, պատմական իր գերութենեն դարձնեն հետո:

## ՀՈՎՆԱՆԻ ԳԻՐՔԸ ԱՍՏՎԱԾՍՇՈՒԽՆՉԻ ՄԵԶ

Հին Կոտակարանի գիրքերը կարելի է բաժնել երեք խումբերու.

ա.—Պատմական գիրքեր.

բ.—Բանաստեղծական և իմաստափրական գիրքեր.

գ.—Մարգարեական գիրքեր:

Հովհաննի գիրքը վերջին խումբին մեջ դրված է. սակայն իրականին մեջ համադրությունը կրնա նկատվի երեքին, քանի որ երեքն այ տարրեր կամ իր մեջ: Նախ ամբողջ գիրքը պատմվածք մըն է ծալրե ի ծայր. որիշ խոսքով՝ մարգարեի մը արկածներուն պատկերացումն է: Երկրորդ, անոր միջին մասին մեջ կմտնե սաղմոս մը, այսինքն հոգնոր բանաստեղծություն մը: Երրորդ, ամբողջ գիրքը կուտա մարգարեական պատգամ մը, այսինքն կրնա-բարյական մեծ ճշնարսություն մը:

Հովհանն գրին հերոսն է քան թե՛ հեղինակը, ինչպես են արդարն, օրինակ, Հետու, Հոութ, Հուդիթ և նմանները, որոնք իրենց

անոնը կրող աստվածաշնչական գիրքերուն գլխավոր դեմքերն են և ոչ՝ գրողները: Ստուգ է թե Հովհանն անունվ մարգարե մը կիշվի Աստվածաշունչի Դ Թագավորությանց ԺԴ 25-ին մեջ, սակայն ոչ մեկ բացահայտ ապացույց կա, թե այդ Հովհանն եղած ըլլա այս գիրքին թեղինակը: Ընդհակառակը և Գրոց մասնագետներ կանդեն, որ այս գիրքը գրված է հրեական պատմական գերութենեն կամ աքսորեն հետո, այսինքն Զ—Ե դարերուն նախքան Քրիստոս միջնդեռ Դ Թագավորությանց մեջ հիշված Հովհանն ապրած է ն. Ք. 770-ական թվականներուն:

Հակասություններուվ լեցուն նկարագիր մըն է Հովհանն, ճիշտ իր պատկանած ժողովորդին պես: Աստուծմէ պատգամ կատան «քարոզելու նիսվէ մեծ քալաքին մեջ», ինչ որ հաճելի չեկավ իրեն: Սակայն փոխանակ իր ամարժանությունը կամ անկարությունը պատճառ բռնելով հրաժարելու

նուան ստաքելութենեն մը, ինչպես փորձեցին ընել Մովսես և ունակը մուս մարգարեներեն, Հովհան դիմեց արտասովոր միջոցի մը. «Փախչիլ Աստուծո ներկայութենեն»: Ուստի Ֆափա հավահանգիստը իշավ, և ավ վարձեց փախչելու համար «Թարսիս», որ կեկանվեր այն ատենավան ծանոթ աշխարհի հեռավորագում մասը, հարաբերաբար Պաղեստինի: Այս կետեն կազմին Հովհանի արկածները, որոնք տեղի կունենան չորս տարրեր վայրերու մեջ՝ հետաքրքրական դրամայի մը չորս կարճ հետարաններով:

### 1.—ԾՈՎԻ ՎՐԱՅՑ

Հովհան Թարսիս կփախչել խորհեղով որ իր Աստուծուն իշխանությունը կտարածվեր լոկ հարակելի երկրին վրա, և հետևաբար չէր հանելու այնքան հեռու տեղերը, և ինք ազատ կըլլար Անոր հետապնդումնն: Գրքին հետինակը սակայն քայլ առ քայլ կփորձեն սրբագրել Հովհանի սիամ և նեղմիտ զաղափարները: Նախ կտորվեցնե թէ Աստուծո իշխանությունը կտարածվի ամենուրեք, թե՛ անշունչ տարրերուն և թե՛ շնչավոր արածներուն վրա:

Ուստի Հովհան հազիկ հեռացած էր իր երկրեն, երբ «Տերը սաստիկ հով մը հանեց և մեծ մրցիկ մը եղավ ծովուն վրա, և նավը խորտակվելու վտանգին ենթարկվեցավ»: Երբ ամեն որ երկրու և տագնապի մատուցված էր, Հովհան քաշված հավի խորշը՝ խոր քուն մեջ քաղված «կիսորդար»: Նավականը մշտեց Հովհանի կողին, արթեցուց զայն, ու կես հանդիմանական շեշտով ըսալ անոր. «Հերիի է խորդաս, եկիր, դուն ալ աղործե քո Աստուծոյ, թերևս քո Աստվածդ ազատե զմեզ և չկորավինք»: Գրքին մեջ ոչինչ ըսկած է, թէ Հովհան աղորեց կամ ոչ. իրողությունը այն էր, որ ծովը տակավ առ տակավ ավելի կատաղի կրառար և ալիքները հավուն մեջ կիստեին: Մարդիկ ի վերջու այն եղանակցության եկան, թե մեղավոր մը կար իրենց մեջ, որուն պատճառով այս անակնեալ փոթորիկը փրթած էր իրենց գլխուն: Ուստի կոհսեն այն ժամանակներու հատուկ միջոցի՝ հանցանորը գտնելու համար: «Վիճակ նետեցին և վիճակը Հովհանին ելավ»: Հովհան պատմեց ամեն բան ստանց վերապահության:

Տեսարանի տագնապի այս կետին մեջտեղ կուգան թե՛ հավաստիներու և թե՛ Հովհանի մարդկային գովելի գիծերը: Վսանօք համափակ կեռքայրացնե մարդերը, որչափ շըներ անդրբությունը կամ խաղաղությունը: Նավաստիներ, որոնք հերթանուներ են, այսինքն ըստ հրեական տեսության անխոնց և անաստված մարդեր, հավանալով հանդերձ որ իրենց գլխուն եկած այս փորձան-

քին պատճառը Հովհանն է, անմիջապես ծով չեն հետեր զայն. այլ ազնվարար կողքին իմասնալ խորմուրդը նաև «Աստուծո ծառային», ու կարացնեն անոր. «Այժմ ի՞նչ ընենք քեզի որ ծովը դադարի» իր կատաղութենեն: Ու մեջուղի կելլե Հովհաննի գրեթե միակ դրական գիծը իր պատասխանին մեջ. «Բնուեցեք զիս և ծով հետեղեցեք, և ծովը պիտի դադարի իր պեկոնութենեն, որովհետու գիտես թե իմ պատճառով եկած է այս մեծ մրցիկը ձեր վրա»:

Արդարու ասպետական է Հովհանի արտահայտած ոգին. բայց չի դադարիր հակասական ու հեգնական լինելու: Այս մարդը չովզեր հեթանուներուն քարոզության երթավ, որպեսզի անոնք կորուսի մատուինն. բայց այժմ այդ միևնույն մարդը պատրաստակամություն կհայտնի ինքզինքը գոհել ուրիշ հեթանուներու համար....: Հովհանի ասպետական առաջարկը կոհմագրավին նովճառան ազնիվ վերաբերմունքով հեթանու հավագներու կողմէն: Ասոնք իրենց գերագույն ճիգը ի գործ կունեն նավը դեսի ցանար դարձնելու: Կուգեն իրենց հետ ազատել նաև Հովհանը: Ու լակոնականորեն կմիջամրտես գրքին ժումկալ հեղինակը. «Զէին կըրնար»: Ի վերջու նավաստիներ դիմեցին Հովհանի Աստվածին և ըսին. «Քավ լիցի, Տեր, որ կորավինք այս մարդուն պատճառով. բայց մյուս կողմէն կիսնորենք որ մեր ընելիքը մարդասպանություն չհամարեն. բանի որ դուն այսպես ովեցիր և այսպես որիրք: Եվ բոնեցին Հովհանը և ակամա ծով նետեցին: Փոթորիկը որքան անակնեալորեն և լած էր, նոյնքան հանկարծական ձևով իշավ: Մարդիկ երկուուղով և երախտիքով լեցվեցան Հովհանի Աստուծուն նկատմամբ և ի նշան շնորհակապության Անոր գոհեր մատուցին և ուստի ըրին որ ավելի մարդավարի կյանք պիտի վարեն այս ազատումնեն հետո: Այսուղի կիշնեն վարագույրը առաջին տեսարանին:

### 2.—ԿԵՏ ԶՈՒԿԻ ՓՈՐԻՆ ՄԵԶ

Երկրորդ տեսարանը տեղի կունենա ամենեն անակնեալ վայրի մը մեջ: Հովհան ծով նետվելեն հետո «Աստուծո հրամանով» կլյանի կետ ծովի մը կողմէն: Այս տեսարանը ամբողջությամբ մենախոտթյուն մըն է առ Աստված ուղղայ: «Նեղության մեջ Տիրոց աղաղակեցի ու Ան լոեց ինձի»: Այս խոսքը ոչ միայն առաջին տողն է չափարերական այս աղործին, այլ նաև խոսցումն է: այս սաղմոսի ամբողջ իմաստին: Մնացյալ տողերը բանաստեղծական ու պատկերավից նկարագրությունն է մարդարի «նեղության» և Աստուծմն «լսկած ըլլալու» երախտագիտության:

Այս աղոթքին մեջ ամենեն տարօրինակ ներսությար սակայն այն է, որ Հովհաննի կողմեն զշումի ոչ մեկ պրտահայտություն կա, գործված անհնազանդության համար: Ամբողջությամբ ցավագին աղաղակ մըն է «ղծիսային» վիճակի մատնված ըլլալուն և ուժին փափաք մըն է անելու դորս գալու և «Տիրոց Տաճարը անգամ մըն ալ տեսնելու»: «Հոգին իմ մեջ նվազեցավ. բայց աղոթքը պիտի հասնի Քեզի Քո տաճարիդ մեջ»: Տակավին կշարունակեն իր մորքին մեջ գամված մնայ այն գաղափարը թե Աստված աղոթքները կլսե լոկ իր Երուսաղեմի սուրբ տաճարեն, որուն մեջ կընակեր Ան ըստ հրեական նեղմիտ տեսակետին: Կընդունի որ տրվածք պատիծ մըն էր իրեն. բայց երբեք մեղանչած ըլլալու և դարձի գալու արտահայտություն չկա Հովհաննի այս աղոթքին մեջ: Վերջավորության՝ թեև մեր թարգմանության մեջ կա սա խոսքը. «Այլ ես ի ձայն օրինութեան և ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ մատուցից պատարագ», սակայն գլխագորյալ բառը կավակի երրայական բնագրի՝ և անկե կատարված բոլոր թարգմանությանց մեջ: Բաց աստի՝ «խոստովանութիւն» իր զրաբար առումին մեջ անպատճառ մեղքի խոստովանություն չի նշանակեր. այլ Աստուծու փառքը և մեծությունը հայտարարելու ալ «խոստովանութիւն» է. և այս իմաստով գործածված է մեր թարգմանության մեջ: Սաղմոսը կավարտի, դարձյալ ըստ երրայական բնագրի, «Տեառն է Փրկութիւն» խոստովանությամբ: Ու արդարք տրված պատիժը բավ համարելով Աստված կփրկե զայն. «Տերը կիրամայե վիշապ ձուկին որ թքնե զայն ցամաքի վրա»:

### 3.—ՆԻՆՎԵԻ ՄԵԶ

Լոյս աշխարհ գալեն հետո՝ Աստված վերըստին կիրամայե Հովհաննի երթալ և քառողել Նինվեի մեջ: Հովհանն թեև չկամ բայց կիրամակերպի այս անգամ աստվածային հրամանին ու կերթա Նինվե: Կքարողէ հրապարակե հրապարակ, փողոցն փողոց: Լոկ մեկ համսադասություն է իր ամբողջ քարոզը. «Երեք օրեն (ըստ երրայական բնագրի՝ քառասուն օրեն) Նինվե պիտի կործանի»: Չկա ոչ մեկ հորդոր ապաշխարանքի, չկա ոչ մեկ հուսադրական կամ պայմանական խոսք, որ եթե ապաշխարեն, պիտի ազատին: Այլ նոյն ժատ, չկամ, միօրինակ և դատապարտող հանկերգը ... Նինվե պիտի կործանի»:

Ու տեսի կունենա անակնակ հրաշքը: Եվ նինվեցիներ հավատացին Աստուծո... պահեցողություն հայտարարեցին. բոլք հագան: մեծամեծներեն մինչև իրենց փոք-

րիկները»: Ուրեմն գրչի երկու ժումկալ հարվածով գրքին հանձնարեղ նեղինակը մեզի կպատկերացն այն նոգեկան հեղաշրջությունը, որ կկատարի այս գեղին, ապականակած ու բարդապես դատապարտյալ աշխարհաքաղաքին մեջ, Հովհաննի ականա քարոզությամբ: Հաջորդդ տողերը նոյնիքն ճարտար, գուսակ և բանաստեղծական մահրամասնություններն են կատարված նոգեփոխության, որ եզրակացության կրերի սա հավաստումով. «Աստուծու աղաղակեցին սրտով և մորքով, ու դարձան իրենց չար ճանապարհներեն և իրենց ձեռքով գործված անօրենություններեն և ըսին. «Ով գիտե, գուցե միտքը փոխե Աստված և հրածարի իր սաստիկ բարկութենեն և չկորսավինք»:

Տեսավ Աստված այս հրաշքը և ի գործ շղրավ իր սպառնալիքը:

Տեսավ Հովհանն այս նոգեփոխությունը «Ասասիկ տրտմեցավ ու խոռվեցավ»: Ու աղոթքի ձևին տակ գրեթե դառնությամբ Աստուծու երեսին տվավ բան մը, որ իրականին մեջ Աստուծու փառքը կկազմեր. և մեջտեղ հանենց իր իսկական դրդապատճառը նման առաքելութենեն մը խոսափելուն. «Ով Տեր, այս չէ՞ր պատճառը իմ Թարսիս փախչելուն. որովհետև գիտեի թե ողորմած ես դուն, գթած, երկայնամիտ ու բազումողորս. և կիրածարիս մարդոց գլխուն չարիք բերելու»: Ու Հովհանն իր հաջորդության զագաթանկետին վրիպած մարդու մը ամբողջ վիատությամբ Աստուծնե խնդրեց վերջ տալ իր կյանքին: Ու Աստված ինչպես ներած էր ամբարիչուն քաղաքին, ներող աշքով նայեցավ նաև Հովհաննի այս մեղադրելի կորության, և կես հանդիմանական ու կես հեգանական ձևով հարցուց. «Արդարու շատ տրտմած ես...»: Եթե ուզենք այս խոտացյալ ու լակոնական հարցումը իշեցնել մեր հասարակ խոսակցության ձևին և քչիկ մը բանամ անոր ծալքերը, պիտի ըսեինք. «Հովհանն, կյանքին մեծագույն հաջորդությունը ունեցար. նմաններդ, որոնք կորուսի դատապարտված են, քո քարոզությամբդ ազատագրվեցան. ուստի պետք չէ՞ր որ դու ալ ուրախանայիր: Կվայելու քեզի այդ կախ երեսը, այս մարդոց դարձի գալուն առիթով...»: Ուրաքն կիրշեցն Հովհաննի ընթացքը Անառակ որդիի առակին եղեց եղբոր ունեցած հոգեվիճակը: Աստուծու նշանակալից հարցումը սակայն ազդեցություն չգործեց Հովհաննի վրա: Նինվեն չէր կործանած. այդ պատճառով սուս մարգարե եղած ըլլալու հիմար գաղափարը կայրեր զինքը...: Հովհաննի այս տըրտում տրամադրության վրա կիշնե վարագույրը պատմվածքի վերջընթեր տեսարանին:

#### 4.—ՀՈՎԱՆԱՆ ԵՎ ԴԱՄԵՆԻՆ

Հովանան տակալին տարվամ էր ներանու քաղաքը կործանված տեսնելու սևեռյա մտածումով: Ուստի վերջին տեսաբանը երբ կրացվի, կտևենենք զայն, որ եած է քաղաքն դորս բարձրադիր վայր մը: և որովհետև չեւ չափազանց տաք էր չոր ճուղերի կապամբամ հայտնայ մը սարքած է իր զիտուն վերև և անոր ներքեւ հատած կապամբ տեսնելու թե «ի՞նչ պիտի պատամեր քաղաքին»:

Քանի որ Հովանան չեր կրցած հասկանաւ Աստուծոն նշանակալից հարցումին տարողությունը, Աստված դիմեց գործնական միջոցի մը հասկցենելու համար իր միտքը: Հրամակեց որ մագլցող դրմենի մը բուսին մենի գիշերվան մեջ ու բարձրանա Հովանանի շինած հովանինին վրա, «զովացնելու համար զայն տաքության իր տառապանքեն»: Հովանան առավոտ կանուխ հրճվածքով տեսավ դդմենին և ժամանակ առաջին անգամ ըլլալով՝ իր առաքելության ենելու ասդին: Արդարն շուտով զգայի եղավ դդմենին զովար ազդեցությունը, և սիրո կապ մը ստեղծվեցավ իր սրտին մեջ դդմենին նկատմամբ, որ իր միակ միմիթարությունը եղած էր իր անհանու առաքելության ամբողջ ընթացքին, և ընդեմ ցերեկի դժոխային տաքին:

Հաջորդ գիշերը Աստոծոն հրամանով որդ մը կծեց արմատները դդմենին: Առավոտ երբ արթնցավ Հովանան, տեսավ, որ դդմենին

բառանած էր արդեն: Կացությանը ավելի վատրարացավ, եթե տապահառու խորշակ մը կասվ և խապատ ցամքեցուց դդմենին: Խելոյն մարգարեն գրեթե կիսեղվելու տաքեն: «Ոգին կրաղվեր»: Տագևապալի այս կացությունը անգամ մը ևս կրկնելու տվավ իրեն նախապես ըրած հուսահատական իր արտահայտությունը. «Ավելի լավ է մեռնիլը, քանի ապրիլը»: Ու Աստված ալ իր կարգին կրկնեց իր խորհրդավոր հարցումը. «Արդարն շա՞ն տրտմած եւ դդմենին վրա»: Ու Հովանան անսրբագրելի մարդու մը կամակ կրությամբ պատասխանեց. «Այս, շատ տրտմած եւ. մեռնելու սատիճան»:

Ու հաջորդեց Աստուծոն շնորհաց հարվածը. «Եռն կմեղքանաս այն դդմենին, որուն վրա ոչ մենակ աշխատանք թափած ես, ոչ ալ՝ ունե խնամք տարած. որ գիշերը մը բուսավ և մրսու գիշերը կրուավ: Ես ինչպես չմեղքանամ Նիմվենի պես մեծ քաղաքի մը վրա, որը կրնակին ավելի քան տասներկու բյոր մարդիկ, որունք չեն կրնար զանազանել իրենց աջը՝ ձախեն: ու այնքան շատ անաստներ»:

Գիրքը կվերջանա այս կտրուկ պատգամով: Այնքան պարզ ու թափանցիկ էր թելադրանքը, որ ոչ թե Աստուծոն մարգարեն մը, ալ՝ ամենեն հասարակ ընթերցող մը անգամ պիտի կրնար հասկանալ և իրավունք տալ Աստոծոն, որ խնայած էր Նիմվե քաղաքին, տեսնելու հետո անոր բնակիչներուն անկեղծ ապաշխարանքը:

#### ՀՈՎԱՆԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Առակ կամ այլաբանություն մը կմկատենք մենք Հովանանի պատմվածքը: Եթո ընդունինք այս տեսակետը՝ այս ատեն գրքին դես հարուցված բնախոսական և այլ առարկություններ ինքնին կիարթվեն և ՀՈՎԱՆԱՆԻ ՄԱՐԴԱՌԵՌՈՒԹՅՈՒՆԸ կվերածվի գրական ու կրոնական գլուխ-գործոցի մը: Մարդիկ առակմերուն մեջ գիտական կամ բանական շարահարույցուն չեն փնտուեր. այլ՝ միտք և խմաստ: Ի՞նչ ըսել կուզե առակը. այս է հիմնական հարցումը առակ մը արժնորելու: Օրինակ, չենք հարցներ թե աղվեսը կամ ագուավը կիսուի՞ն: ընդհակառակը հաճուրով և հետաքրքրությամբ կիեւսնինք անոնց «խոսկցության», գիտնալով հանդերձ թե անոնք չեն խոսիր: Անոնց Վերագրված խոսքերուն կամ արարքներուն մեջեն կնշմարենք մարդկային գովելի կամ պարսավելի բարքերը:

Հոգերանական իրողություն է, որ մենին հանցանքը կամ թերի կողմը մերկապարանց իր երեսին զարնելը, զայն սրբագրելու կամ սխալը մատնանշելու դիտավորությամբ,

հաճախ չի ծառայեր իր նպատակին, և կրնա մինչև իսկ հակառակ արդյունք տալ: Բայց եթե մեղքը կամ սխալ մտանությունը առակի մը կամ օրինակի մը ձևին տակ ենթերկայացվի, ընդհանրապես հասկանալի և երբեմն ալ ընդունելի՝ մինչև իսկ սրբագրելի կոլլա ենթակային կողմեն: Մանոթ է Դավիթ թագավորին գործած ծանր մեղքը, և նախան մարգարենին կողմեն օրինակով մը զայն իրեն ենթերկայացնելու ճարտար կերպը, որ Դավիթ անգիտակցաբար ինք կուտա իր դատավճիռ (Բ. Թագ. ԺԲ գլուխ): Նոյն կերպը կիրարկեց նաև Հիսուս ձաղկելու համար հրեա մեծամեծներու բարյալական կուրությունը և Հին Կոտակարանի Ուխտին հանդեպ իրենց անհավատարմությունը: Օրինակ, Այգեստերի (Մատթ. ԻԱ. 33—46) կամ Կոչնաստերի (Մատթ. ԻԲ. 1—14) առակմերով, որ արդարն անոնք «գիտցան, թե իրենց համար ըսկած էր» այդ առակը:

Արդ, Հովանանի գիրքը նման նպատակ հետապնդող պատմվածք մըն է: Թե արդարն հեթանոսներն ալ ի վերջո

պիտի արժանանային աստվածային շնորհներով՝ նախառեալիած և հաստատված էր Հին Կոստառամի մեջ: Նախ Աստվածաշունչի առաջին էջերում մեջ կիթիլին արդարներ, որոնք ապրած են նախքան «Երրայրեցի» ժողովուրդի մը ծագումը. Արեւ, Սկիթ, Ենովք (Ծննդ. Ե 21) նոյ, Մելքիսեդեկ (Ծննդ. ԺԴ 18—20) հրեա չեն բարին ազգագրական հմաստով: Բաց աստի Աստված կիսուտանա Աքրահամին, որ «Քու սերունդու պիտի պիտի օրինվին երկրի բոլոր ազգերը» (Ծննդ. ԽԲ 18): Այլոր ըսկած է. «Բոլոր ծայրերը աշխարհին պիտի հիշեն և պիտի դառնան Տիրոջ և բոլոր ազգերու տոհմերը քեզի երկրպագություն պիտի ընեն» (Սղմ. ԽԱ 28):

Այս ուղղությամբ ավելի հատկանշանական են Եսայի մարգարեի պատգամները: Աստված խոսքը ուղղելով Իսրայելի ժողովուրդին կրու. «Թեթև պաշտոն մըն է քեզի համար իմ ծառաւ ըլլալը, լոկ Խորայելի ցեղերը կանգուն և կենդանի պահելու նախառակով... Քեզ հեթանուներու համար լոյսի մը պիտի վերածեմ, որպեսզի իմ ՓՈՎՈՒԹՅՈՒՆԸ հասնի աշխարհի հեռավորագույն ծագերը» (Ես. ԽՄ 6): Ուրիշ խոսքով, Խորայելի կոչումն էր նախ մարմնավորել այս «ԾԱՌԱՆ», զոր այնքան սրտագրավ կերպով նկարագրած է Եսայի մարգարեն, և ապա ըլլալ հեթանուներու դարձին պատճառ և առաջնորդ. «Հակոր իմ ծառաւ է, օգևական պիտի ըլլամ անոր. ոգիս անոր վրա դրած եմ. հեթանուներուն իրավունք պիտի ընեն. անոր անունին հեթանուներու պիտի հուսան: Ես, Տեր Աստված, կոչեցի քեզ և զորացոցի քեզ, որպեսզի «Ուխտ» ըլլաս ազգերու և լոյս՝ հեթանուներու» (Ես. ԽԲ 1—6: Բղջ. նաև Ես. ԾԵ 4, 5 — Դաս. Է 14 — Հով. Բ 23 կը): Բայց այս բոլորը գրեթեն մոռացության տրված էին, և Խորայել ինք-զինքը նկատած էր Տիրոջ ընտրալը, որով միայն պիտի քաղեր Աստված: Բոլոր մյուս ազգերու արժանի չէին Աստունու ուշադրության: Հետևաբար գրեթեն ոչ մեկ ճիզ ըրավ Խորայելը իր ստացած լոյսը տարածելու նաև հեթանուներուն մեջ, այլ գրեթե գրվածի տակ պահեց. որովհետև ինքն ալ ակընկալված ափով չօգուվեցավ անկե, շարունակ իննալով կրապաշտության մեջ և բարության մյուս ազգերեն շատ քիչ տարբերություն ցույց տալով:

Հատկապես գերություննե դարձին՝ (516 Ա. Ք.) Խորայելը առավել լեցված էր հեթանուսց հանդեպ դատնությամբ և ատելությամբ: Արդարն այնքան շատ տառապանք քաշած էր այս ժողովուրդը օտարներեն, որ այլևս գրեթե ամրոշությամբ օտարատյաց դարձած էր: Այս ոգին հաճախ ուժգնորեն կերևի

սալմուսներեն ոմանց մեջ, ինչպես նաև Եզր-Նեանի գիրքերուն մեջ: Այս ոգիին արձագանքները կրներ նաև նոր Կոստառամի մեջ շատ տեղեր: Օդինակ, երբ Հիսուս օրին մեկը չուր ուղեց սամարացի կնոշմե մը, այս վերշինը զարմացած անոր երեսը նայեցավ և ըսավ. «Դուն որ հրեա մըն ես, ինչպե՞ս կրնան չուր ուղեց կնոշմե, սամարացի կնոշմե մը, քանի որ հրեաներ երբեք չեն խառնակիր սամարացիներու հետ» (Հովկ. Դ 9):

Խորականության և չկամության այս ոգին այնքան արմատացած էր այս ժողովուրդին մեջ, որ այլևս գրեթե մոռացության տված էր իր մեծագույն կոչումը, որուն համար Աստված ընտրած էր զայն. այսինքն նախ կենսագրծել Աստունու պատգամները իր կյանքին մեջ և ապա փոխանցել զանոնք ուրիշ ազգերուն: Այս երկու կետունուն մեջ այլ թերացած էր Խորայել: Խնքդինը հեթանուներեն հեռու կապահեց պիտի ընեն բոլոր այլն, ինչ որ ըրավ Հովկան: Կամ գեղեցիկ գրականության հերոսը, Հովկան, նոյնինքն Խորայելի ժողովուրդն է: Եթե Հովկան դժկամություն կհայտնե հեթանուն քաղաք մը քարոզության երթապու՝ սրտեն կիսուի ամեն հրեայի. որովհետև իր կացության մեջ ամեն հարազատ խորայեցի պիտի ընեն այն, ինչ որ ըրավ Հովկան: Սակայն հետինակը պատմությունը կրերե այնպիսի ճարտար վերջավորության, որ ամեն հրեա կամավ կամ ակամ զինաթափ պիտի ըլլար իր նեղմութենեն, և իրավունքը Աստունու պիտի տար, մինչև իսկ մեղադրելով Հովկանը իր այս կամակորության համար: Ուրիշ խոսքով իր իսկ դատապարտության վճիռը պիտի տար, առանց սակայն ունենալով Դավիթի քաջությունը ճանանալու իր միսալը և սրբագրելու զայն:

Եթե Հովկանը Խորայելն է, ո՞վ կամ ի՞նչ է կետ ձուլը, որմե կկլանվի ան: Վիշապ ձուկը Խորայելի գերությունը կամ աքսորն է: Զոկի փորին մեջ Հովկանի շրթունքներուն վրա դրված ամեն մեկ նախառապությունը պատկերավոր և այլաբանական ակնարկությունն է խորայելյան գերության, զոր թեև «նեղության մեջ» և «դժոխային տառապանքով» անցուցին, բայց ի վերջո արժանի եղան Աստունու «կավելու», գերութենեն դառնալու և վերաշներու իրենց տաճարը զոր անգամ մըն ալ տեսնելու կարուտով կմաշեր Հովկան ձուկի փորին մեջ. (Բ. 5, 8): Արդարն մար-

գարեալիսն զիրքերուն մեջ գերությունը ներկացված է պատկերով վիշտավին, որ թեև կու ավալ բաց չկրցավ մարտել Խորայի ժողովորդը: Կըսէ Երեսիա մարգարեն: «Կերպ զիս Նարուգործուոտք՝ (Խորայի գերի վարող թագավորը). կլեց զիս

(Խորայի ժողովորդը) վիշտավի մը պէս» (Երես. ԾԱ. 34): Ու Աստված կրտսովանն: «Արեւ պիտի լուծեան Բարեկոնեն. և սիստի հանեան անոր բերանեն իր կու տփածք» (Նոյն. ԾԱ. 44):

## ՀՈՎՆԱՆ ԵՎ ՄԵՆՔ

Երբ մեր ժողովորդը և Հովնանը դեմ-դիմաց բերել կփորձենք, մեր միտքը կուգան առաջին առիթով երկու պարագաներ, որ արդարի Հովնան մասնավոր կերպով մտած է մեր կյանքին և մշակույթին մեջ: Առաջինը Սոլյամարի եկեղեցի պատին վրա բանդակված Հովնանի պատկերացումն է, որ միաժամանակ ներկայացուցիչն է մեր մանրանկարային արվեստին բազմաթիվ նոյն պատկերացումներուն, որոնց մեջ ան վիշտավ ձկան երախը կնետավի: Հնութենեն մեջի եկած թիվ պատկերներ այնքան խոսուն և գրավիչ են, որքան այդ բանդակը: Արվեստի գործ մը հաջողած է կրունքը, երբ դիտողին ուշադրությունը ամբողջությամբ իր վրա կլենդրուացնեան և հոգական վիճակ մը կրստենե մարդու մեջ: Արդ, Հովնանի Աղթամարի պատկերացումը իր պարզության, նախնականության ու խոշոր գիծերուն մեջ այդ է որ կընե տպավորվելու ատակ աչք ունեցող գորեթե ամեն դիտողին վրա: Կատինքնե թեզ պահ մը. ու դուն համուքրով կիտես զայն իր ժումկալ գիծերուն մեջ և նշանալից ծպիտ մը կորպագծի դեմքիդ վրա: Ու եթե ծանոր ես Հովնանու Գիրքին, հետաքրքրությամբ կնշմարես, որ հարազատ համանմանություն մը կա երկութին ոճի և ոգիին միջև. երկուքն ալ երևութապես նախնական ու ժողովրդային են, մատշելի ամենքին և հասկնալի ամենքեն: Խորիդանշանական արվեստը իր բնական կատարելությունը գտած է այդ պատկերացումին մեջ, ինչպես «սեմպոլիկ» գրականությունը իր գրավիչ կատարը գտած է Հովնանի մարգարեական գիրքին մեջ: Երջանկի զուգահեռականություն մը կա երկութին միջև, որ գրականությունը և գծագրությունը զիրար գրկած են հարազատորեն:

Սակայն ավելի կարևոր է երկորորդ դեմ հանդիմանությունը հայ ժողովորդին և Հովնանին: Այդ նախ կապատահի ամեն կիրակի, երբ Հովնանի սաղմուր կերգենք Ավագ օրինության մեջ: Օրինակ, «Ընդ Յովնանու անձն իմ ծիեալ յալիս ծովու. աղաղակեալ ի ներութեան իմուս առ փրկողդ և յոյս, լոր ձայնի իմուս»: Կապատահի նաև Հովնանի տարեկան հիշտասկությամբ մեր տոնացուցին մեջ: Մեծ պահքեն երեք ուրբաթեներ

առաջ Հովնան կուգա ամեն տարի իր տեղը գրավելու մեր տոնացուցին մեջ, իբրև լուրմը կամ կելքուր ԱՌԱՋԱՎՈՐՆՅԱ պարին, որ կիշեցնե հիմնեացվոց խիստ պահեցողությունը: Եթե Սոլյամարի արվեստագետը պատկերացում է պատմվածքի ամենեն դրամատիկ պահը, որ մասնավոր կոչում կընե մեր երևակայության, Հայց. եկեղեցին ալ բռնած է այդ գրքին բարդացես ամենեն հշանակալից հեպքը և բանած է անոր վրա համապատական շարականներով:

Օրվան շարականներու եղանակները ծանրաբեռն և ծանրագնաց են ցորենի պարկերով լեցուն սպալի մը պէս: Կարծես մեկ ձայնանիշի ալյազան արժեքներու վրա գրված նոյն եղանակն է, որ կինչեցնեն «Հարց»-են մինչև «Համբարձի» շարականները: Բառերն ալ պարզ են գրի ոճին և Աղթամարի բանդակին պէս: Ահավասիկ երկու պարզ նմուշներ անունցնե:

«Ապաշխարությամբ ապրեցավ բաղաքն հիմնեացվոց. Լեել ձայնի մարգարեին եղալ թողությունն մեղաց»:

### կամ

«Որ լվար ձայնի աղորթից երկուտասամ բյուրոց ԵՎ մանկանց տղայց, ներող, գթած և երկայնամարտ. Լուր այժմ և ինձ, որ կարդամս առ թեզ»:

\* \* \*

Արդյոք այս երկո՞ւ մարզերուն մեջ միայն շփում կամ կապ ունինք մենք Հովնանի նետ. որից նմանության գիծեր չկա՞ն իր և մեր միջև: Որո՞նենք:

«ՔԱՐՈՉԵԼԼ» քրիստոնեական եկեղեցի, հիմնական «Փոնկցիոն»-ներեն մեկն է: Իր հիմնադրին և Փրկչին առաջնամերթ գործունեալությունը եղալ այդ, և վերջին հրամանը՝ իր աշակերտներուն. «Գացեք, որենմա, բոլոր հեթանոս ազգերը ինծի աշակերտ ըրեք, մկրտեցեք զանոնք անունով Հոր և Որդին և սուրբ Հոգին. և սորվեցուցեք անոնց պահեն ամեն ինչ, որ պատվիրեցի Ձեզի»: Ծնորիկ այդ պատվիրեին արսօր քրիստոնեական կրոնքը տարածված է աշխարհի գրեթե բոլոր ամկյունները: Ան-

սպով այդ պատվերին Հիսուսի աշակերտներն առնվազն երկուր եկան նաև Հայաստան և հիմք դրին պատեղ բրիտոններկան եկեղեցին:

Հովհաննի մեջը քարոզելու աստվածային պատգամին շանալը եղավ: Մի կերպ իր սրտեն չեկավ Աստուծուն շնորհին մասնակից դարձնելը նաև ուրիշներ, երբ մանաւանդ անոնք իրեն արենակից ու կրտսակից չէին: Եթե Քրիստոսի աշակերտները մեկական Հովհանն ըլլային, բրիտոններությունը Պաղեստինի սահմաններն դուրս պիտի չգար և զանցառելի հրեական աղանդ մը պիտի ըլլար, եթե մինչև իսկ պահեր իր գոյությունը: Քրիստոնեությունը իր այսօրվան տարածանքը կպարտի հայունի կամ անհայտ բյուրավոր քարոզիչներու, որոնք արդարն կազմեն իր իսկական պարծանքները:

Հովհաննի եկեղեցին այօր արդար պարծանք կրնա անդրադառնալ, որ ավելի քան 500 միլիոն հետևորդներ ունի աշխարհի ամեն կողմերը: Բյուզանդական եկեղեցին դարձի բերած ու դարերով հովված է պալ ժողովորդները, որոնք երբեմն կկազմեն և այսօր այ չեն դադրած կազմել փառքը և մեծամասնությունը իր գլխավորած եկեղեցներու միասնականության: Բողոքական եկեղեցիներ աշխարհով մեկ տարածված են շնորհիլ ավետարանելու իրենց անհագ տեսչին: Դպի եկեղեցին կրնա մատնանշել հապեշական եկեղեցին իրեն իր դուստրը: Ասորի եկեղեցին անգամ, որ երբեմն թափանցեր էր Պարսկաստանի գրեթե ամեն կողմերը և Ավետարանի լույսը տարածեր էր Կեդրոսական Սահու և Զինաստանի խորերը, այսօր այ ունի Հնդկաստանի մալապար համանգին մեջ ծաղկյալ պատմական բրիտոննեական հավաքականությունը, իրեն դավանակից և դուստր եկեղեցի:

Իսկ մենք... ինչով կրնանք եերկայանալ առաջի Քրիստոս դատավորին, երբ մեզմեհաշիլ պահանջեն, թե ի՞նչ ըրած ենք իր շնորհած Ավետարանի քարոզության քանրարմերը: Կրնա՞նք ըստել: «Տէր, ինձի երկու քամքար տված էիր, երկուր ալ անոր վրա ես շահեցա...»: Աղվաններ չկան այսօր իրեկ ուրուն եկեղեցի: Վրացիններ չեն իսկ ընդունիր, որ հայ եկեղեցին ողկված քառոջներով դարձի եկած են. ամեն պարագային այսօր մեզի հետ ի հաղորդության չեն: Կրնա՞նք արդարանալ արդյոք պատճառամբ բերելով այն դժվար կացությունը, որուն մեջ ապրած ենք դարերով: Տարակույն վեր է, թե դժվար պայմաններու մեջ ապարի ու պամել աստվածային պահնդը ինքնին մեծ արժանիք մըն է. սակայն այսօրվան արևելյան եկեղեցներն ո՞ր մեկը չէ գոյատևած նույնքան ծանր խաչերու եեր-

թիւ: Ավելին: Ոչ մեկ եկեղեցի ավելի ծանր ու կաշկանդյան պայմաններու ներքև ապրած է բան առաջին երեք դարերու առաքելական եկեղեցին: Հայառակ այս իրողության սակայն ոչ մեկ եկեղեցի կրնա պարծենալ, թե առաքելական դարերու եկեղեցին ավելի՝ կամ առնվազն անոր չափ եռանդրուն և արդյունավոր եղած է քարոզության մեջ...»:

Պատմական ու այժմեական իրականությանց լուսին տակ բացահայտ է նմանության գիծերը, որ կան հրեական եկեղեցիի մարմնացումը հանդիացող Հովհաննի և մեր եկեղեցին միջև: Այսօր մեր ժողովուրիդին ու մեր եկեղեցականության համար մեզմն դուրս քարոզություն կատարելու գաղափարն անգամ տարօրինակ պիտի թվի: Արդյոք չե՞նք կամենար մենք ալ, Հովհանն պես, որիշներուն «ղատնալը չար ճանապարհներեն և աստվածգիտության գալը»: Նման հարցումին պատասխան անգամ չունինք, քանի որ չէ անցած մեր միտքն: Առհասարակ այնպես կխորհինք, որ մեր ունեցած մեզի համար լավ է, և բավ է. և ուրիշներուն՝ ուրիշներուն: Թող ամեն մարդ իր ունեցածը պահեն... Այն ատեն սակայն ո՞ր այնոք է տեղավորել տերունական վերջին պատգամը. «Գնացէք այսուհետև, աշակերտներ զամենայն հեթանոսա...»:

Գոնե ներքին առաքելություն ունենայինք: Գոնե մեր եկեղեցին դուրս ինչու բերելու աշխատանքին լծված ըլլայինք: Որևէ ատեն մորեն անցուցած է Հայաստանյաց եկեղեցին գեթ նման առաքելություն մը կազմակերպելը: Արդյունքը չէ կարևորը. ոչ ալ հաջողությունը, այլ նըման տրամադրություն մը ունենալը և այդ ուղղությամբ քայլեր առնելն է կարևորը: Տարօրինակ կրթի այսօր մեզի համար մինչեւ իսկ եկեղեցին բնմեն քարոզելը զոտ ավետարանական հիմնական նյութերու մասին. օրինակներ.

«Եթէ կամիս կատարեալ լինել, ե՛թ, վաճառեալ զամենայն ինչ զոր ունիս, եւ եկ զկնի իմ»: Գեթ կիրարկելու համար զայն կուսակրոն հոգևորականության:

«Տէր, առ յո՞վ երթիցոր մեր, զի զրան կենաց յահտենականաց ունիս դու»:

«Տէր իմ եւ Աստուած իմ». Քրիստոսի համար ըսպած:

«Առանց իմ ոչինչ կարէք առնել»: Ալլովըն հանդերձ:

Մեզմեն ունաց համար եթե ոչ իմաստն զորիկ՝ գեթ կասկածելի բառեր են օրինակ. «Ապահանդառք», «Փրկություն», անձնական «հաղորդակցություն» Քրիստոսի հետ

և նմանենք, որոնք կարևոր տեղ կգրավեն Ավետարանի ուսուցման մեջ: Հաճախ այս գաղափարները կնկատվին բողոքական ապրանքներ, որոնցմէն հեռու պետք է կենալ: Մյուս կողմեն երբ մեկը եկեղեցական իշխանության, միության, օրենքի և կարգականության գաղափարները կփորձե շեշտել, կկարծվի, որ կաթոլիկության մոայնութենության վարսկված է, հակառակ անոր, որ Քրիստոս կըսէ. «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկին» (Մատթ. Ժ. 18): Կամ երբ Պողոս առաքյալ կմորդորէ. «Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգին լինիցի» (Ա. Կոր. Ժ. 40):

Արդարք ալեկոնության բռնված է այսօր նաև մեր եկեղեցին հավը: Արտաքին ազդակներ չեն այդ ալեկոնության պատճառները, այլ ներքին: Դժբախտաբար ալեկոնության պատճախանատութերը մտած են նավուն խորշը, «կընանան և կխորդան»:

Սատ Հովհաննի: Սակայն անգամ մը որ համոզում գոյացող Հովհանն, թէ ինք էր պատճառը այդ ալեկոնության, պատրաստականությունն հայունեց, որ ծով նետեին զինքը, քան թէ պատճառ դառնար այդշափ մարդերու կորուտին: Մեր ակնկալածը մեր եկեղեցին «Նավը խորտակիմելո վտանգին» առաջնորդողներն Հովհաննի քաջորդունքը չէ, այլ՝ նինվեացվոց լրջորդունք «Աստուծու հավատապու» և «սիսալ ճամբարէն դառնաւու», որպեսզի Հարաստանյաց եկեղեցին «չկորավի» այս ալեկոնության պատճառով:

Այս է Ավետարանի մեջ ակնարկված «Հովհաննի հշանը»: «Զի ինչպես Հովհանն հշան մը եղավ նինվեացիներուն, որոնք ապաշխարեցին իր քարոզությամբ, նովեապես պիտի ըլլա նաև ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ (Քրիստոս) այս ազգին համար»:

Պիտի ըլլա՝ արդյոք Քրիստոս այդ «Նըշանը» նաև մեր ազգին համար:

